# ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԼՂՀ ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

***<u>Ընթացիկ աշխատանքներ</u>***

Նախնական տվյալներով 2016 թվականի ընթացքում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 32384.6 մլն դրամ՝ պլանավորված 31500.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 2.8 տոկոսով կամ 884.6 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ կազմել են 97.8 տոկոս կամ պակաս է հավաքագրվել 733.8 մլն դրամ:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 63 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 4 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 44 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 48.2 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ: Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 122 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 59-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 37-ը՝ ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման, 10-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման, 4-ական՝ ելակետային տվյալների և դրանց ուղղիչ գործակիցների ճշտության ու հարկային հաշվանցումների կամ վերադարձի հիմնավորվածության և 8 այլ ուսումնասիրություններ:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 3 վարչական գործ՝ 3.6 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 7 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 37.6 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 80 վարչական գործով սահմանվել է 1.0 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 5404 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 4508:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 40 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 8 վարձու աշխատողի՝ 1.2 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 22 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսում ԼՂՀ կառավարության կողմից հաստատվել է ««Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար «Գ» սերիայի դրոշմապիտակները կիրառության մեջ դնելու մասին» որոշումը, լրացում կատարվել «Պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման և վերադրոշմավորման կանոններում»:

Ֆինանսների նախարարի հրամանով հաստատվել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում արտադրվող պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար «Գ» սերիայի դրոշմապիտակի նմուշը և տեխնիկական պահանջները», փոփոխություններ և լրացումներ կատարվել «Հարկային մարմնում ծառայողական քննության անցկացման հանձնաժողովի կազմում» և «Միջպետական ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիներով ուղևորափոխադրումներ իրականացնող հաստատագրված վճար վճարողների հսկիչ կետերում հաշվառման կարգում»:

Նախարարության մեկ աշխատակից մասնակցել է «Ֆինանսական ոլորտի զարգացման կենտրոն» միջազգային կազմակերպության կողմից Սլովենիայի Լյուբլյանա քաղաքում կազմակերպված «Հարկ վճարողների սպասարկումը որպես օրինապահության ամրապնդման խնդիրների լուծման միջոց» թեմայով սեմինարին:

ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

Հարկային ծառայողների մասնագիտական պատրաստվածության ու արհեստավարժության բարձրացման նպատակով հարկ վճարողների սպասարկման և վերահսկողական գործառույթ իրականացնող թվով 66 աշխատակիցների համար

հաշվետու ամսում կազմակերպվել են ուսուցողական սեմինարներ՝ «Հարկերի և պարտադիր վճարների հաշվարկում», «Հարկային ստուգումներ և հսկողություն», «Տեղեկատվական տեխնոլոգիաները հարկային մարմնում», «Հաշվապահական հաշվառման ստանդարտներ», «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների հաշվարկում» և «Հաշվապահական ձևակերպումներ» թեմաներով:

***<u>Հասարակայնության հետ կապ</u>***

2016 թվականի 4-րդ եռամսյակում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 700 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Հաշվետու ամսում հարկային մարմնում գործարկվել է «Skype» հեռաձայնային ծառայություն, որի միջոցով մեր երկրում ներդրումներ կատարելու պատրաստակամություն ունեցող գործարարները, գործող հարկ վճարողներն ու հարկային ոլորտով հետաքրքրվող այլ անձինք ցանկացած կետից մասնագետին կարող են հղել հարկային օրենսդրությանը վերաբերող իրենց հետաքրքրող հարցերը և օպերատիվ կարգով ստանալ դրանց պատասխանները:

Դեկտեմբերի 1-ին Արցախի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի հրավերով ԼՂՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Հարությունյանը և ՀՎՄՀՎԻ բաժնի պետ Ա. Մուսայելյանը հանդիպեցին ֆակուլտետի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետ՝ ներկայացնելով հարկային համակարգում իրականացվող բարեփոխումները:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 310, ելքագրվել՝ 141 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 11 գրություն: